



## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան  
08.04.2021թ.

ԲԴԽ-16-Ո-Կ-06

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԳԱՅԱՆԵ ՄԱՋՄԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀՐԱՎԻՐՎԱԾ 08.04.2021 ԹՎԱԿԱՆԻ  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

*նախագահությամբ՝*

*Բարձրագույն դատական խորհրդի նախագահ*

*Ռ. Վարդազարյանի,*

*մասնակցությամբ՝*

*անդամներ*

*Գ. Բեքմեզյանի  
Դ. Խաչատրյանի  
Մ. Մակյանի  
Լ. Մելիքջանյանի  
Ա. Մխիթարյանի  
Ս. Չիչոյանի  
Գ. Զհանգիրյանի  
Վ. Քոչարյանի*

*Արդարադատության նախարար*

*Ռ. Բադալյանի,*

*Արդարադատության նախարարի*

*ներկայացուցիչ*

*Դ. Գասպարյանի*

*Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր*

*իրավասության դատարանի դատավոր*

*Գ. Մազմանյանի*

*քարտուղարությամբ՝*

*Ա. Շիլաջյանի,*

դռնբաց նիստում, քննության առնելով Բարձրագույն դատական խորհրդի անդամներ Գ. Բեքմեզյանի և Ա. Մխիթարյանի միջնորդությունը՝ լրացուցիչ ապացույց պահանջելու մասին, Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման, քանի որ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է որպես լրացուցիչ ապացույց ուսումնասիրել դատավոր Գ. Մազմանյանի կողմից քննված թիվ ԿԴ1/1293/02/17 քաղաքացիական գործով «ԱյԴի բանկ» ՓԲԸ կողմից ներկայացված պատասխանը, կայացված դատական նիստերի արձանագրության ձայնագրությունները և 20.09.2019 թվականին կայացված վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքը, ինչի կապակցությամբ անհրաժեշտ համարեց Դատական դեպարտամենտից պահանջել թիվ ԿԴ1/1293/02/17 քաղաքացիական գործն ամբողջությամբ:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 151-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հարցի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ դատավորից, կարգապահական վարույթը հարուցած մարմնից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից (դրանց պաշտոնատար անձանցից), ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու ներկայացնել հարցի քննության համար նշանակություն ունեցող ապացույցներ, որոնք տվյալ անձանց ազդեցության ոլորտում են՝ սահմանելով ժամկետ դրանք Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնելու համար, իսկ որոշումը կամովին չկատարելու դեպքում այն ներկայացնել կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 92-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի նիստը հետաձգվում է նաև՝ հարցի քննությունը տվյալ նիստում անհնարին դարձնող այլ բացառիկ հանգամանքների առկայության դեպքում:

Հաշվի առնելով, որ անհնարին է առանց նշված լրացուցիչ ապացույցի ուսումնասիրման Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գայանե Մազմանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը՝ Բարձրագույն դատական խորհուրդն անհրաժեշտ է համարում հետաձգել սույն գործով նիստը՝ մինչև Դատական դեպարտամենտի կողմից թիվ ԿԴ1/1293/02/17 քաղաքացիական գործի տրամադրումը: Թիվ ԿԴ1/1293/02/17 քաղաքացիական գործի տրամադրման համար սահմանվում է 5-օրյա ժամկետ:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 92-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 151-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով՝ Բարձրագույն դատական խորհուրդը,

### **ՈՐՈՇԵՑ**

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գայանե Մազմանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 08.04.2021 թվականի նիստը հետաձգել:
2. Դատական դեպարտամենտից պահանջել թիվ ԿԴ1/1293/02/17 քաղաքացիական գործը՝ ամբողջությամբ:
3. Դատական դեպարտամենտի կողմից թիվ ԿԴ1/1293/02/17 քաղաքացիական գործը տրամադրելու համար սահմանել 5-օրյա ժամկետ:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ**

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ԱՆԴԱՄՆԵՐ՝**

**Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**

**Գ. ԲԵՔՄԵՂՅԱՆ**

**Դ. ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ**

**Մ. ՄԱԿՅԱՆ**

**Լ. ՄԵԼԻՔՉԱՆՅԱՆ**

**Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ**

**Ս. ՉԻՉՈՅԱՆ**

**Գ. ԶՀԱՆԳԻՐՅԱՆ**

**Վ. ՔՈՉԱՐՅԱՆ**